

Հաստատված է
«Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ -ի Խորհրդի
«28» «մարտի» 2011թ.
արձ.02/11թիվ N1 որոշմամբ
Խորհրդի նախագահ

-----Գ.Մովսեսյան

«Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ

**Հաշվապահական հաշվառման քաղաքականություն
(նոր խմբագրություն)**

Երևան 2011

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույնով սահմանվում է «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի (այսուհետև վարկային կազմակերպություն) ակտիվների, պարտավորությունների և կապիտալի միասնական հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման քաղաքականությունը:
- 1.2 Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մշակված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից համատեղ ընդունված «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի», «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգի» և այլ իրավական ակտերի պահանջների համաձայն:
- 1.3 Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունն իր մեջ ներառում է այն կոնկրետ սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը, հրամանները, որոշումները, կարգերը և կանոնակարգերը, որոնք ընդունվում են վարկային կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման համար:
- 1.4 Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետագայում չի փոփոխվելու, բացառությամբ այն դեպքերի, երբ էական փոփոխություններ տեղի կունենան վարկային կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով կտրվի առավել էական տեղեկատվություն, կամ հաշվապահական հաշվառման կարգավորող օրենսդրության մեջ տեղի կունենան փոփոխություններ:
- 1.5 Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում վարկային կազմակերպությունը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝
 - ա. նման հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից.
 - բ. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից.
 - գ. գործնական փորձից՝ այնքանով, որքանով դա համահունչ է կետ 1.5-ի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

2. Հաշվապահական հաշվառման կազմակերպումը

- 2.1 Վարկային կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝
- ա. Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով.
 - բ. կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան.
 - գ. անընդհատ՝ վարկային կազմակերպության պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:
- 2.2 Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը:

3. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

- 3.1 Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների (ՀՀՄՍ): Ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Վարկային կազմակերպության հաշվառման գրանցումների վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: Ֆինանսական հաշվետվությունների առումով հաշվետու տարի է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- 3.2 Վարկային կազմակերպությունում ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) պատրաստվում են հաշվեգրման սկզբունքին համապատասխան:

4. Եկամուտների և ծախսերի ճանաչում

- 4.1 Ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:
- 4.2 Վարկային կազմակերպության կողմից տեղաբաշխված միջոցների դիմաց ստացվելիք և ներգրավված միջոցների դիմաց վճարվելիք տոկոսները հաշվարկվում են տարին ընդունելով 365 օր, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- 4.3 Վարկային կազմակերպության տեղաբաշխված վարկերից ստացվելիք տոկոսները հաշվեգրվում են եկամուտներին յուրաքանչյուր օր: Հաշվեգրվող գումարի չափի հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:
- 4.4 Վարկային կազմակերպության կողմից ներգրավված փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները ծախս են ճանաչվում յուրաքանչյուր օր:
- 4.5 Չաշխատող վարկերի և այլ ակտիվների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Նման տոկոսային եկամուտները ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են դրամարկղային մեթոդի համաձայն:

4.6 Հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն հատկացումներն իրականացվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

5. Հարկային հաշվառում

5.1 Շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի, գույքահարկի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

5.2 Ավելացված արժեքի հարկի գծով հաշվառումն իրականացվում է «ԱԱՀ-ի մասին օրենքի» 27-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է՝ ելնելով իրականացված գործարքների ընդհանուր շրջանառության մեջ հարկվող գործարքների շրջանառության տեսակարար կշռից:

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

6.1 Վարկային կազմակերպության կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է ՀՀ դրամով և արտարժույթով, Վարկային կազմակերպության կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգով, ինչպես նաև այլ կարգերով և իրավական ակտերով նախատեսված և պատշաճորեն կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

6.2 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

7. Վարկեր և դեբիտորական պարտքեր

7.1 Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Վարկային կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վճարելու մտադրության:

7.2 Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

7.3 Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

7.4 Աշխատող վարկերի պահուստավորման չափը ղեկավարության կողմից որոշվում է կազմակերպության գործունեության սկզբից տրամադրված վարկերի վարկունակության, որակի և չաշխատող վարկերի կշռի, վարկային պատմության, ինչպես նաև պատմական արժեքի (historical cost) վերլուծության հիման վրա:

8. Վարձակալություն

8.1 ի՞նչ է Վճարված արժեքը և տարածքային ստորաբաժանումների գործունեությունն ապահովելու նպատակով վարձակալում է տարածքներ :

Վարձակալված միջոցների Հաշվապահական հաշվառումը տարվում է համաձայն ՀՀ օրենսդրության:

- 8.2 Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում :
- 8.3 Կազմակերպությունը իրականացնում է նաև ֆինանսական վարձակալություն, որի դեպքում վարձակալին է փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության ,բոլոր ռիսկերն ու հատույցները : Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել վարձակալին: Կազմակերպությունը ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն որպես ակտիվ և ներկայացնում է այն որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում գուտ ներդրումների մեծությանը հավասար գումարով :

9. Վարկային կազմակերպությունը ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

- 9.1 Վարկային կազմակերպության ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:
- 9.2 Վարկային կազմակերպության ակտիվների պահուստավորումը և ներկայացումը ֆինանսական հաշվետվություններում իրականացվում է 7.4 կետի համաձայն :

10. Ոչ նյութական ակտիվներ

- 10.1 Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով:
- 10.2 Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի ամորտիզացիոն ժամկետը որոշում է Վարկային կազմակերպության տնօրենը ելնելով ՀՀՄՍ 38-ով սահմանված չափանիշներից:
- 10.3 Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Վարկային կազմակերպությունը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

11. Հիմնական միջոցներ

- 11.1 Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:
- 11.2 Հիմնական միջոցների միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ գույք և գրասենյակային սարքավորումներ, կապի և հաղորդակցման միջոցներ,

հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, փոխադրամիջոցներ, արագամաշ առարկաների և այլն) իրականացվում է գլխավոր հաշվապահի մեթոդական ցուցումների հիման վրա՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման ժամկետից, նշանակությունից և նպատակից:

11.3 Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում :

11.4 Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

11.5 Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Եթե տարվա ընթացքում կատարված վերանորոգման ծախսերի մեծությունը գերազանցում է ակտիվի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում՝ վերագնահատված արժեքի) 10%-ը, ապա այս ծախսերը նույնպես ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

11.6 Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

11.7 Վարկային կազմակերպության հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են Վարկային կազմակերպության Խորհրդի որոշման հիման վրա: Վերագնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքները Վարկային կազմակերպության հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են ՄՀՀՄ 16-ով սահմանված կարգով:

12. Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

12.1 Վարկային կազմակերպությունում աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

13. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

13.1 Նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը համաձայն հիմնական մոտեցման : Ֆինանսական տարվա վերջին աշխատանքային օրվա վիճակով կազմված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, եթե անհրաժեշտություն է առաջանում կատարելու համապատասխան ճշգրտումներ՝ նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ, կատարվում են հետևյալ դեպքերում.

ա/ Վարկային կազմակերպության կողմից ինքնուրույնաբար էական սխալներ հայտնաբերելու դեպքում

բ/ էական սխալներ, որոնք հայտաբերվել են աուդիտորական կազմակերպության կողմից

գ/ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

13.2 Եթե էական սխալի գումարը կախված է տվյալ գործարքի կամ հողվածի չափից և բնույթից, և հաշվեկշռում արտացոլված ցուցանիշները էական չեն փոփոխվելու, և եթե այդ տեղեկատվության չբացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ փոփոխություններ չեն կատարվում:

13.3 Եթե Վարկային կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունները սահմանված կարգով հրապարակելուց հետո առաջանում կամ հայտնաբերվում են էական սխալներ, ապա նման դեպքերում ճշգրտումներ չեն կատարվում և համարվում է, որ նման տեղեկատվության վերաներկայացումն անհրազորձելի է:

14. Մույն կարգի խախտման համար պատասխանատվությունը

14.1 Մույն քաղաքականությամբ սահմանված դրույթների ոչ պատշաճ կատարումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներին համապատասխան:

